ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-705-13.11.2023-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածը «*կրկնակի (երկրորդային) ջրօգտագործում*» հասկացությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հասկացությունով.

«հորատանցքի միջոցով սփորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ՝ ջրախնայող համակարգ, որը կապահովի ձկնաբուծարանի ելքային ջրերի առնվազն 40 տոկոսի մաքրումից հետո կրկին օգտագործումը նույն ձկնաբուծարանի նույն ավազաններում՝ հորատանցքից իրականացնելով ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրառի ծավալի առավելագույնը 60 տոկոսի չափով ջրառ և ապահովելով ձկնաբուծարանի մուտքային ջրերի առնվազն 40 տոկոս ջրախնայողություն:»:

Հոդված 2. Օրենսգրքի 33.1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալների նվազեցում նախատեսվելու դեպքում՝ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալները տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի միջոցով ստացված ջրառի փաստացի ծավալներին համապատասխանեցնելու նպատակով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածը «*կրկնակի (երկրորդային) ջրօգտագործում*» հասկացությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հասկացությունով.

«հորատանցքի միջոցով սփորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ~~ձկնաբուծական տնտեսություններում~~ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ՝ ջրախնայող համակարգ, որը կապահովի ձկնաբուծարանի ելքային ջրերի առնվազն 40~~% ի~~ տոկոսի մաքրումից հետո կրկին օգտագործումը նույն ձկնաբուծարանի նույն ավազաններում՝ հորատանցքից իրականացնելով ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրառի ծավալի առավելագույնը 60~~% ի~~ տոկոսի չափով ջրառ և ապահովելով ձկնաբուծարանի մուտքային ջրերի առնվազն 40~~%~~ տոկոս ջրախնայողություն:»:

Հոդված 2. Օրենսգրքի 33.1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալների նվազեցում նախատեսվելու դեպքում՝ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալները տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի միջոցով ստացված ջրառի փաստացի ծավալներին համապատասխանեցնելու նպատակով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված ««Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Կ-705-13.11.2023-ՏՏԳՇ-011/0**, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին»** Կ-705[1]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0**, «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»** Կ-705[2]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0 **օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների**

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյանի առաջարկները	1. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ Կ-705-13.11.2023-ՏՏԳՇ-011/0 1.Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

	2. Նախագծի 1-ին հոդվածի «ձկնաբուծական տնտեսություններում» բառերը փոխարինել «ձկնաբուծարաններում» բառերով, իսկ «%» նշանը փոխարինել «տոկոս» բառով: 3.Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. **«Հոդված 2.** Օրենսգրքի 33.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով. «8) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալների նվազեցում նախատեսվելու դեպքում՝ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալները տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի միջոցով ստացված ջրառի փաստացի ծավալներին համապատասխանեցնելու նպատակով:»:**»		

	2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ Կ-705[1]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0 1.Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառից առաջ լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը: 2. «Օրենքի նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 5. Ջրօգտագործման թույլտվությամբ ամրագրված ջրառի և էկոլոգիական թողքի կետերում ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման պահանջները չկատարելը կամ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքի խափանման, տվյալների առցանց փոխանցման դադարեցման, վթարի վերաբերյալ կարճ հաղորդագրությունների կամ էլեկտրոնային փոստով ծանուցումից հետո սարքի վթարը կամ	2. Ընդունվել է:	Ընդունվել է:

	խափանումը սահմանված ժամկետում չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով:» 3.Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:»		
	3. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Կ-705[2]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0	3. Ընդունվել է:	Ընդունվել է:

	1. Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ»: 2. Նախագծի 2-րդ հոդվածի, օրենքի 27-րդ հոդվածի «1-ին մասի» բառերը հանել, «2024» թիվը փոխարինել «2023» թվով: 3. Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանվում են Կառավարության կողմից երկու տարվա ընթացքում.»: 4. 3-րդ հոդվածի վերնագիրը հանել:		